2. ՄԱՀ ՁՈՒԶՈՂ ՏՂԱՆ

Մե գեղիմ մեջ կէղնի մե տերտերըմ ու իրիսկինըմ։ Էսոնք էրեխա չեն ունենա։ Շատ օր մենձրնան կը, մըտածեն կը իրանց էրեխա չէղնելու մասին, թե. «Մենք, փառք աստըծու, ապրուստ ունինք, էրեխա չունինք։ Արի,— ըսին,— էրկըսար աստված կանչենք, աղաչենք, բալքի աստված մեզի մե էրեխեմ տա»։

Աղաչեցին, աղաչեցին, աստված ըդոնց ձենը լսեց, ինը ամիս, ինը սահաթ, ինը դախա թըմմելեն ետև մե էրեխեմ տվեց։

Իրիսկինը պառկելեն առաջ չորնին կանչեց ըսավ.— Գնա դայեկին ըսա գա, ըստեղ ընձի ազատե։

Էդ վախտը չորանը իրա խելքով կըսե. «Կըսեն օր, կնիկը ծունկը զարկե գետին, էրեխա կը բերե։ Որպես կըսեն՝ ծնկեն էրեխա կէղնի, հիմի ես աշեմ պիտի տեսնիմ օղո՞րթ է թե սուտ է»։ Էդ վախտը ինքը պայ մտավ, իսկ իրիսկինը շարչըրվիր կը մենակ։ Շատ շարչըրվելեն ետև մեկ էլ տեսավ, օր հէրթըքեն էրկու հատ աղունիկ իջան իրիսկընիս քովը. դառան էրկու հատ ախչիկ, ընկան իրիսկընիս թևերի տակը։ Իրիսկինը ազատվավ, բերավ մե լավ տղա։ Ախչըկները էրեխեն փատտեցին, մորը պառկեցրին, դրին մոր կողքը։

Ախչկներուն մեկը ըսավ.— Էրթանք։

Էն մեկն ըսավ.— Օր էրթանք, կըլլի՞, ի՞նչ էրինք, ի՞նչ տվինք էս տղին։

Քուրն ըսավ.— Օր ըդման է, իմ թարաֆեն էս տղին կը փեշքը-շեմ՝ դրշերը քնի, սապախտան ելլի, բարցը վերցնե, տկեն վերցը-նե տորպակըմ օսկի։

Էդ քուրն օր էդ փեշքեշը տվավ, մեկել քուրը ըսավ.— Ես գու-ղեմ օր էս էրեխեն մե օրը էղնի մի տարեկան և ինչ օր սիրտը ուզե, էն կատարե։

Ըսին, աղունիկ դառան ու թողին գնացին։

Զորանը տեսավ, էդ բանն իմացավ,— Ես,— ըսավ,— էս շատ լավ բան էղավ, իրիսկինը չիտե՝ իրան ինչ է էղե։

Գնաց օչխրնոցը, տեսավ օր մե թաղա գառմ է էղե։ Գառը վեր-ցըրավ, բերավ իրիսկընիս քովը, շորով փատտեց, գրավ տղի տեղն ու տղին առավ, գնաց։

Սապախտան խապար տարան տերտերին, թե՝ աշկըդ լուա, իրիսկինը պառկե, մե գառմ է բերե։

— Փառք աստու,— ըսավ,— ես աստծուց խնթրել եմ՝ ընձի էղ-նի, թող շուն էղնի։ Հիմի փառք կուտամ աստծուն, օր ինձ գառ է տվե։

Զորանն էր՝ էրեխեն առավ, գնաց, տասնըհինգ օր մնաց, տղեն դառավ տասնըհինգ տարեկան տղա։ Էդ տղի գլխի տկեն ամեն օր մե տորպակըմ օսկի կը վերցընե, հրմը տղեն խապար չէր։ Զորանն օր տեսավ՝ օսկուն էլ տեղ չկա, գնաց տերտերի քովը, ըսավ.— Տերտեր, ընձի իզին տուր, օր ես էրթամ իմ տունը, տղեն էկել է իմ էտևեն։

Տերտերն իրավունք տվավ. տղեն ու չորանը ելան գնացին։ Շատ գնացին, քիչ գնացին, շատն ու քիչը աստված գիտե, մեկ էլ հասան մե Անվա պես ավերակ քաղքիմ։ Իրանք գիշերը մնալու տեղ չունեին։ Զորանը տղի շնորքը գիտեր, ըսավ.— Տղա, աստված կան-չե, էս քաղաքը թող կենթանանա։

Էդ սահաթին տղեն աստված կանչեց ու քաղաքը կենթանացավ։ Իրենք մեկ տեղ սրթըրվան, սապախտան ելան աշին օր քաղաքը կենթանացել, փեթկի պես կը վժվժա։

Թագավորը մարթիք կանչեց, ըսավ.— Լալա-վաղիրներ, իմա-ցեք՝ էս քաղաքը էս գիշեր վո՞վ է մտե. բռնեք բերեք իմ քովը։

Լալա-վաղիրն ընկան քաղաքի մեշը, ման էկան, ման, տղին ու չորնին գտան։ Զորանն ու տղեն մեկ-մեկ պատմեցին թագա-վորին, թե ինչը տեսան քաղաքը, ինչը կենթանացուցին։ Եփ օր թագավորն իմացավ՝ ըդման է, տղին իրան կշեռնորթով օսկի տը-վավ ու ճամփու գրավ։

Տղեն օր տեսավ իրան հունարը, շատ ուրախացավ։ Ելան գնացին առաջ. քաղքեն օր շատ հեռացան, չորանն ըսավ.— Այ տղա, էս օսկին մե քիչըմ էլ դու շալկե։

Տղեն օր շալկեց, ուժը չախտեց, դրեց վեր։ Չորանը մե շապալաղ զարկեց, աղի խելքը գնաց։ Տղեն մտքի մեշ ըսավ. «Եթե մենք արնակից էղնեինք, ըսման չէր զարկե»։

Տղեն վեր ելավ ու ըսավ.— Չորա՛ն, ընձի որտից բերել ես, հոն կը տանիս, թե չէ աշխարհի մեշը քեզի ինչ ըսես կը շինեմ։

Չորանը տղին ըսավ.— Էրթանք գեղ։

Էկան հասան գեղ։ Հասան իրիսկնկանը, տղեն ըսավ.— Պատմե քու բերնով իմ էղելութենը։

Չորանը պատմեց՝ ինչ օր ինքը էրել էր էդ տղի գլխին։

Իրիսկինը զարմացավ ու փառք տվավ աստծուն, պաքեց տղի էրեսներն ու ըսավ.— Տեր աստված, փառքդ շատ էղնի. տեյմորի հիմի գառ էր, հիմի դառավ տղա։

Տղեն տեսավ օր հերը չկա, մորը հարցուց.— Մեր, ըսավ, ո՞ւր է հերը։

— Ըսավ.— Տեղ է գնացե։

Էդ վախտին տղեն չորնին դառուց մե եքա շուն, ըսավ՝ գնա դուռը պառկի, մինչի սապախտան։

Գիշերվա կիսուն տերտերն էկավ տուն, տեսավ օր, ի՞նչ տեսնի, կնկա ծոցը մե հատ շահել տղա պառկած անո՞ւշ-անո՞ւշ քուն է էղե։ Տերտերը մտածեց, խելքը գլխեն թռավ, դառցավ ըսավ. «Տեր աստված, թե մարմնական է, ես մարմնական զավակ չունիմ, թե հոգեկան տղա է, ես հոգիական զավակ չունիմ»։

Էդ մտածմունքի վախտը տերտերի արտըսունքը կաթեց իրիսկընկա էրեսին։ Իրիսկինը զարթավ, տեսավ օր տերտերն է, ըսավ.— Տերտե՛ր, ի՛նչ կը մտածես, էս տղեն մեր մարմնական զավակն է։— Ու տղին ձեն տվավ։

Տղեն զարթավ, հորը հարցուց.— Տեսա՞ր մեր դռան շունը։

Ըսավ.— Տեսա։

Ըսավ.— Կանչեցե՛ք գա նես։

Կանչեց նես։ Տղեն ըսավ.— Շո՛ւն, դառցի առաջվա չորանը։

Շունը դառցավ էլի էն չորանը։

Տղեն ըսավ.— Պատմե, ինչ օր էրել ես։

Չորանը մեկ-մեկ պատմեց, ինչ օր էղել էր առաջից մինչև վերջ։

Տերտերը փառք տվեց աստուն։

Տղեն հորն ըսավ.— Տերտեր, մեր չորնի դատը քու ձեռով էրա։

Տերտերն ըսավ.— Օղուլ, ինքը էրել է, մենք չենք էնե. թո՛ղ էրթա, ասսուց գտնի։

Չորնին թողին, գնաց իրեն տունը, մնացին իրենք։

Մե քանիմ օր անցավ, տղեն տեսավ օր հերը մե մեռելըմ տարավ թաղեց, դառցավ էկավ տուն։

Ըսավ.— Տերտեր, դու էդ ի՞նչ էրիր։

Ըսավ.— Մարթը մեռել էր, տարա թաղեցի։

Ըսավ.— Եփ օր ըդման է, ես քեզի տղա չեմ էղնի և էստեղ չեմ մնա։

Ըսավ.— Օղուլ, ի՞նչ ես ըսըմ, ո՞ւր պիտի էրթաս։

Ըսավ.— էրթամ պըտի էն աշխարը, օր մայ չկա։

Ըսավ.— Օղուլ, աշխարը եփ օր ծնիլ կա, մայն էլ հետն է։

Հերը շատ ըսավ, տղեն քիչ լսեց, չ'համաձայնվեցան։ «Մնաս բարով», «էրթաս բարով». տղեն ելավ ճամփա։

Տղեն ընկավ ճամփա, գնաց, գնաց, շատ գնաց թե քիչ գնաց, աստված դիտե, օրվա մեկը հասավ մե չինարի ծառի։ Տեսավ օր մե հատ Սինամ ղուշ ծառի գլխուն նստած էր։

— Բարև՛ քեզ,— ըսավ,— Սինամ ղուշ։

— Բարո՛վ էկար, տերտերի՛ տղա։

Տղեն ըսավ.— Ղուշ ախպեր, դու ի՞նչ գիտես օր տերտերի տղա եմ։

— Ես լավ գիտեմ, օր դու տերտերի տղեն ես, կէրթաս էն էրկիրը, օր մայ չկա։ Հենց էստեղ է, օր մայ չկա։

— Դե լավ, պատմե, ղուշ ախպեր, ո՞նց մայ չկա։

— Պատմեմ,— ըսավ,— տերտերի տղա։ էս լավ ծառը կը տեսնի՞ս։

— Կը տեսնիմ,— ըսավ։

— Տարեկան մի բմբուլ պըտի տամ, օր էս ծառը բմբլով կորի։ օր ես մեռնիմ։ էն վախտ դու էլ կը մեռնիս։

— Չէ՛,— ըսավ,— ես չեմ մնա, ախըր օր քեզի մայ կա, մնամ ի՞նչ էնեմ։

Ու գնա՞ց, գնա՞ց, շատ գնաց, քիչ գնաց, շատն ու քիչը աստված դիտե, օրվա մեկին հասավ մե Ալագազ սարի պես կորեկի թեճի[1]։ Մի հալիվոր մարթ նստած էր թեճի կուշտը։

— Բարև՛, հալիվոր ախպեր։

— Բարով էկար, տերտերի տղա։

[1] Ճեղք (Ս. Բ.)։

Ըսավ.— Դու ի՞նչ գիտես, օր ես տերտերի տղեն եմ։

— Ես գիտեմ, օր դու տերտերի տղեն ես, կէրթաս էն էրկիրը, օր մայ չկա։ Հենց հոս էլ մայ չկա։

— Դե լավ,— ըսավ,— պատմե տեսնիմ, ի՞նչպես է։

Բիձեն ըսավ.— էս կորեկի սարըն օր կը տեսնիս, տարեկան մի մի հատիկ պըտի տանիմ կորցնեմ, եփ օր պարպավ, ես էլ պըտի մեռնիմ։

Տղեն չը համաձայնավ, ելավ ու գնաց։ Գնաց, օրվա մեկին հասավ օվկիանոս ծովի դեմ, տեսավ մե ճնճուղ էդտեղ նստած, քրճուճ կենե։ Ըսավ.— Բարև քեզ, ճնճուղ ախպեր։

Ըսավ.— Ասսու բարին, ղու տերտերի տղա։

Ըսավ.— Դու ի՞նչ գիտես, օր ես տերտերի տղա եմ։

Ըսավ.— Ես գիտեմ, օր դու տերտերի տղեն ես, կէրթաս էն էրկիրը, օր մայ չկա։ Հենց էստեղ է, օր մայ չկա։

Ըսավ.— Պատմե տեսնիմ։

Ճնճուղն ըսավ.— էս օվկիանոս ծովը կը տեսնի՞ս, տարեկան մի կտուց ջուր պըտի տանիմ ուրիշ էրկիրներ, թափեմ։ Եփ օր պարպավ, տեղը ղարդրկվավ, նոր կը մեռնիմ։ Տերտերի տղա, լավ իմացի, խո էսիկ պարպելու բան չէ՞։

— Չէ,— ըսավ. թողեց գնաց։

Գնա՞ց, գնա՞ց, օրվա մեկը գնաց մե շենքի դեմ առավ, մտավ նես, տեսավ էրկու հատ շահել, սիրուն ախչիկ, նստել իրանց համար քարգահ կէնեն։

— Բարև՛,— ըսավ,— քուրեր։

— Հազար բարի,— ըսին,— դու բարով էկար տերտերի տղա։

— Ախչըկներ,— ըսավ,— դու ի՞նչ գիտեք՝ ես տերտերի տըղեն եմ։

— Մենք գիտենք՝ դու տերտերի տղեն ես, կէրթաս էն էրկիրը, օր մայ չկա։ Հենց էստեղ է, օր մայ չկա։

Հարցնե կը.— Հեչ ձեզ մայ բառ չկա՞։

Կըսեն.— Չկա։

— Օր էդման է, իրար հետ ապրինք քուր ու ախպեր,— ըսավ տղեն։

— Ապրինք,— ըսին ախչըկներըն ու ապրեցան։

Քանի հարուր հազար տարի էին ապրել, էն էլ աստված գիտե, մեկ էլ տղի գլոխը փչեց օր դառնա հայրենիք, հորն ու մորը տեսնի։ Քուրերն ըսին.— Այ աղա, խելքդ մի կորցնե, էդ քարը գոքեդ թափե. հիմի ոչ հեր կա, ոչ մեր կա, ոչ ազգական։

— Չէ՞, օր չէ, ես կը գնամ իմ հորրս ու մորրս տեսնիմ։

Վերջը չ'համաձայնելով, տղեն ելավ ընկավ ճամփա՝ դեպի հայրենիք։ Էրթլու վախտը ախչըկները իրեք հատ անմահական խնձոր փեշքաշ տվին, օր էրթա, դիպնի դառնա, սաղ-սալամաթ հասնի իրենց։ Թամբահ էրեցին, օր խնձորները մարթու չտա. դրա համար, օր չը ըխտիարնար, չմեռնիր։

Տղեն խնձորներն առավ, ընկավ ճամփա, օրվան մեկին հասավ ծովին, տեսավ օր օվկիանոս ծովը ցամքել է, ճնճուղըն էլ սատկել է։

— Ա՜յ,— ըսավ,— հիմի ես էլ պըտի սրա օրին հասնեի։

Ըդտեղեն ելավ դուս, գնաց, գնաց, հասավ կորեկի թեճի տեղը, տեսավ օր կորեկի թեճի տեղը դարդա՜կ, բիձեն էլ տեղը մեռած։

— Ա՜յ, հա՜յ,— ըսավ,— օր մնայի, ես էլ էսոր օրին կ'ընկնեի։

Ըդից ելավ, ընկավ ճամփա, գնա՜ց, գնա՜ց, հասավ չինարի ծառին։ Տեսավ օր ծառը բըմբըլով, կորած է, ղուշն էլ վրեն սատկած։

— Ա՜յ, հա՜յ,— ըսավ,— թե օր մնայի, ես էլ էս օրին կէղնեի։

Ըդից ընկավ ճամփա, գնա՜ց, գնա՜ց, հասավ իրանց գեղը։ Օր հասավ, միտքը բերեց, ըսավ օր՝ մեր տները էս թարաֆն է։ Գնաց իրանց տանը տեղին մոտեցավ, տեսավ մե ըխտիար մարթ նստած է՝ հարուր իցցուն տարեկան։

— Բարև՛,— ըսավ,— քեղի, ըխտիար։

— Ա՜յ բարով, հազար բարի էկար դու ջահել տղա, ուրդից գուքաս, ուր կէրթաս։

— Հեռու տեղե գուքամ,— ըսավ,— մեր տունը կէրթամ։

— Ձեր տունը ո՞րն է,— ըսավ ըխտիարը։

Ըսավ.— Իմ գիտենալով ըստեղ է, որտեղ օր դու նստել ես,— ըսավ։

— Դու ո՞ւմ տղեն ես,— ըսավ։

— Ես տերտերի տղեն եմ,— ըսավ։

— Օղո՛ւլ,— ըսավ,— օխտը պորտիս մեջը տերտեր չի էղե. ամմեն մեկըս հարուր, հարուր իցցուն տարի ապրել ենք, ըդման բան չենք իմացե, դու ի՞նչ կը հարցնես։

Տերտերի տղեն մատը դրավ գլխուն ու մտածեց. «Էն ծառն օր էնտեղ է բմբլոտել, էն կորեկն օր էնտեղ է պարպել, էն ծովն օր էնտեղ է ցամքե, ըստեղ էլ տերտեր կը մնա՞»։ Ըսավ ու ետ դառցավ, ընկավ ճամփա, դեպի իրան անմայ էրկիրը։

Շատ օր գնաց, օրվան մեկը մարթու մեկը առաջը կըտռեց.— Այ տղա,— ըսավ,— ծառավ մեռա, մե ջուր է, մե բան է տա՞ս, ես հովնամ։

— Ջուր չունիմ,— ըսավ։

— Ջեբըդ իրեք հատ խնձոր կա,— ըսավ,— մեկը հան տուր ընձի, ուտեմ հովանամ։

Տղի հոգու հետ օր շատ խաղաց, խնձորի մեկը տվավ մարթունկերավ։ Խնձորն օր կերավ, տղի էրեսին մազ ու մորուք էկավ։ Շատ գնաց, քիչ, օրվան մեկը խնձորի մեկն էլ մե ուրիշ մարթու տվեց։ Տղեն տեսավ իրան, օր արթեն ճերմըկավ։ Քիչ էլ օր գնաց, խնձորի մեկն էլ ձեռքեն առան, տղեն քանիմ օրեն հոգին տվավ, աշխըրեն ազատվավ։

Եվ օր ծնվել կա, մայն էլ հետն է։